Հաստատված է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության
«15» «Հունվար» 2025թ. թիվ 08/12 որոշմամբ,
ուժի մեջ է 31.01.2025թ.
Վարչության նախագահ Ա. Առաքելյան

Հրապարակման ամսաթիվը «20» «Հունվար» 2025թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասն տեղեկատվության համար դիմել Բանկ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
Easy Wallet բջջային հավելվածի օգտատատեր հաճախորդի համար բանկային հաշիվ բացելու և սպասարկելու

ԵՐԵՎԱՆ 2025

1. Սույն տեղեկատվական ամփոփագրով (այսուհետ՝ Ամփոփագիր) սահմանվում են <<Իզի Փեյ>> ՍՊԸ-ի, այսուհետ՝ Ընկերություն, կողմից սպասարկվող <<Easy Wallet>> բջջային հավելվածի (այսուհետ՝ էլեկտրոնային հարթակ) օգտատեր Հաճախորդի (18 տարին լրացած ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ) համար <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից բանկային հաշիվ (այսուհետ՝ Հաշիվ) բացելու և սպասարկելու պայմաններն ու էական այլ տեղեկությունները:
2. Հաշվով Հաճախորդին մատուցվում են հետևյալ բանկային ծառայությունները (այսուհետ՝ Բանկային ծառայություններ). Հաշվին կարող են մուտքագրվել գումարներ էլեկտրոնային հարթակում Հաճախորդի հաշվառման հաշիվը (այսուհետ՝ Դրամապանակ) համալրվելու նպատակով, Հաշվից գումարները ելքագրվում են ուղղվելով Դրամապանակ (բացառությամբ եթե գործում են Դրամապանակի համալրման սահմանափակումներ), Հաշվին կարող են գումարներ մուտքագրվել և օգտագործվել էլեկտրոնայի հարթակում գործող Օպերատորների օգտին վճարումների կատարման նպատակով, ինչպես նաև Հաշվից գումարները Հաճախորդը անձը հաստատող փաստաթղթով կարող է ներկայանալ Բանկ, նույնականացվել և ստանալ կանխիկ:
3. Բանկային ծառայությունների ամբողջական պայմաններին Հաճախորդը կարող է ծանոթանալ Ամփոփագրից, Բանկի ինտերնետային կայքէջից՝ https://www.aeb.am/ կամ պարզել դրանք կապվելով Ամփոփագրում նշված Բանկի կապի միջոցներով:
4. Ամփոփագրի հրապարակման ամսաթվից հետո Ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել, ինչը Հաճախորդը կարող է պարզել կապվելով Ամփոփագրում նշված Բանկի կապի միջոցներով:
5. Հաճախորդի նույնականացումը կատարում է Ընկերությունը, ինչպես նաև Բանկի կողմից հաճախորդի նույնականացումը, ինքնության ստուգումը կատարելու և հաստատելու նպատակով Հաճախորդը Բանկին պետք է ներկայացնի պետական լիազոր մարմնի կողմից տրված Հաճախորդին նույնականացնող արժանահավատ և վավեր տեղեկություններ/փաստաթղթեր/, որոնք Բանկին ներկայացնելով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Բանկի կողմից ստուգվեն Հաճախորդի նույնականացման և անձնական տվյալները, դրանց վավերականությունը և հաճախորդի ինքնությունը, այդ թվում՝ Բանկի կողմից կատարվեն հարցումներ և ստացվեն հաճախորդի անձնական տվյալները «Նորք» տեխնոլոգիաների կենտրոն հիմնադրամից, «Էկենգ» ՓԲԸ-ից և/կամ տեղեկատվական այլ բազաներից, դրանք ստուգվեն, համեմատվեն և համադրվեն Հաճախորդից ստացված նույնականացման և անձնական տվյալների հետ:
6. Բանկային ծառայություններն առաջարկվում/մատուցվում/ են Հաճախորդի նույնականացվելու, Հաճախորդի և Բանկի միջև էլեկտրոնային հարթակում առցանց եղանակով բանկային ծառայությունների մատուցման պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, կնքվելու և Պայմանագրով սահմանված տեղեկությունները/փաստաթղթերը Բանկին ներկայացնելու, Հաճախորդի անձնական տվյալների մշակման և այլ համաձայնությունները Բանկի սահմանած ձևով տրամադրվելու, Պայմանագրի պահանջները կատարելու պայմաններով: Պայմանագրի կնքմամբ Հաճախորդը ամբողջությամբ ընդունում, հաստատում և համաձայնվում է Պայմանագրով սահմանված բոլոր դրույթներին և պայմաններին:
7. Էլեկտրոնային հարթակում նույնականացված հաճախորդը ծանոթանում է Պայմանագրին և կատարում է Պայմանագիրը կնքելու համաձայնությունը հաստատող նշում էլեկտրոնային հարթակում, ինչի հիման վրա ինքնաշխատ եղանակով Պայմանագրում լրացված տվյալներով Հաճախորդի և Բանկի միջև Պայմանագիրը համարվում է կնքված: Սույն կետով սահմանված կարգով Պայմանագիրը կնքվելու պահից ձեռք է բերում Բանկի և Հաճախորդի միջև ձեռագիր ստորագրությամբ կնքված թղթային պայմանագրին համարժեք իրավաբանական ուժ և նշանակություն: Պայմանագրի էլեկտրոնային ֆայլը Բանկը պարտավոր է ուղարկել Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեին Պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հաճախորդի պահանջի դեպքում՝ Բանկը միակողմանի ստորագրությամբ/կնքմամբ/ հաստատում և տրամադրում է Հաճախորդին Պայմանագրի թղթային օրինակը երեք աշխատանքային օրվա ընթացքում:
8. Բանկի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն կատարելու նպատակով Հաճախորդը Բանկին պետք է ներկայացնի իր գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, անձնական տվյալների, ինչպես նաև հաճախորդի գործունեությանը վերաբերող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ, հայտարարություններ, համաձայնություններ /փաստաթղթեր/:
9. Հաճախորդը պետք է ապահովի հաճախորդի գործարար բնութագիրը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելու համար Բանկի կողմից պահանջվող հիմքերի,տեղեկությունների/փաստաթղթերի ներկայացումը:
10. Հաճախորդի կողմից պետք է վճարվեն Սակագներով սահմանված վճարները:
11. Հաճախորդի կողմից Բանկին պետք է ներկայացվի Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեն և բջջային հեռախոսահամարը (նշելով Պայմանագրում Հաճախորդի տվյալներում, որոնք Հաճախորդը կարող է փոփոխել Բանկին գրավոր դիմում ներկայացնելով), ապահովվի այդ կապի միջոցների մշտական հասանելիությունը, այդ կապի միջոցներով Հաճախորդը հանձնարարում է Բանկին ուղարկել ցանկացած տեղեկատվությունը (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված Բանկի կողմից հաճախորդին պարտադիր տրամադրման ենթակա տեղեկատվությունը, ներառյալ՝ հաշվի քաղվածքները, ինչպես նաև էլեկտրոնային պայմանագրերը, ծանուցումները, այլ փաստաթղթերը, էլեկտրոնային հարթակներում Հաճախորդին նույնականացնելու նպատակով գաղտնաբառերը, անվտանգության կոդերը և/կամ այլ գաղտնի տվյալները), որոնք Հաճախորդը պարտավոր է ստանալ և ծանոթանալ ստանալու օրվանից: Ընդ որում հաշվի քաղվածքները, ծանուցումները և այլ

փաստաթղթերը ուղարկվելուց ոչ ուշ քան 15 օրացույցային օրվա ընթացքում կամ փաստաթղթում/տեղեկատվությունում/ նշված այլ ժամկետում Բանկին առարկություններ չներկայացնելը հաստատում է, որ Հաճախորդը համաձայնվել է տեղեկատվությանը:

12. Հաճախորդի կողմից Բանկին ներկայացված տեղեկությունները, փաստաթղթերը, կապի միջոցները, էլեկտրոնային փոստի հասցեն և բջջային հեռախոսահամարը ու այլ տեղեկություններն ամբողջական չլինելու, սխալ և/կամ վավեր չլինելու և/կամ փոփոխվելու դեպքերում՝ դրանք տեղի ունենալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդը պետք է Բանկին ներկայացնի ամբողջական, ճշգրիտ, վավեր և/կամ փոփոխված տեղեկությունները /փաստաթղթերը/, ինչը չկատարելու բացասական հետևանքները կրում է Հաճախորդը:
13. Հաճախորդը պարտավոր է ծանոթանալ և սպասարկվել Պայմանագրով, Պայմաններով և Սակագներով սահմանված կանոններով ու ապահովել դրանց պահանջների ամբողջությամբ կատարումը և պահպանումը, այդ թվում՝ Սակագներով սահմանված վճարների պատշաճ, ժամանակին և ամբողջությամբ կատարումը:
14. Հաճախորդը պարտավոր է Բանկի հետ մեկանգամյա գործարքում կամ գործարար հարաբերությունում ներկայացնել Բանկին իրական շահառուի տվյալների վերաբերյալ տեղեկատվություն, իրական շահառուի փոփոխության կամ իրական շահառուի ի հայտ գալու դեպքում՝ անհապաղ, սակայն ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Բանկին:
15. **Զգուշացում. Հաճախորդին նույնականացնող գաղտնի տվյալները (PIN կոդ (գաղտնի ծածկագիր), այլ գաղտնաբառ), էլեկտրոնային հարթակներում Հաճախորդի մուտքանունները և գաղտնաբառերը, Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեին և/կամ բջջային հեռախոսահամարին ուղարկված գաղտնաբառերը, մեկանգամյա անվտանգության կոդերը Հաճախորդը պարտավոր է պահպանել գաղտնի, որևէ կերպ չբացահայտել և չտրամադրել երրորդ անձանց (այդ թվում՝ դրանք չպետք է տրամադրել Բանկի որևէ աշխատակցի և/կամ որևէ այլ անձի ոչ բանավոր, ոչ գրավոր, ոչ կարճ հաղորդագրությունով և ոչ էլ որևէ այլ ձևով), ինչը չկատարելու դեպքում՝ Բանկը չի կրում որևէ պատասխանատվություն Հաճախորդի կրած վնասների համար, ինչպես նաև Հաճախորդը կրում է Բանկին պատճառված վնասներն ամբողջությամբ հատուցելու պատասխանատվությունը:**
16. Բանկային ծառայությունները, դրանց մատուցման կարգը, ձևը, ընդհանուր պահանջները, Բանկի վճարների չափերն ու վճարման ժամկետները սահմանվում են Պայմանագրով, Բանկի Վարչության կողմից հաստատվող Պայմաններով, սույն տեղեկատվական ամփոփագրով և այլ տեղեկատվական ամփոփագրերով (այսուհետ՝ Տեղեկատվական ամփոփագրեր և/կամ Սակագներ): Պայմանները և Սակագները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասերը, հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում (http://www.aeb.am): Բանկն իրավունք ունի Պայմանագրում, Պայմաններում, Սակագներում կատարել միակողմանի փոփոխություններ/լրացումներ: Բանկի կողմից Պայմաններում, Սակագներում կատարվող փոփոխությունները/լրացումները հրապարակվում են Բանկի կայքում՝ դրանց ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 7/յոթ/ աշխատանքային օր առաջ: Պայմանագրում, Պայմաններում, Սակագներում կատարվող փոփոխությունները/լրացումները ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 7/յոթ/ աշխատանքային օր առաջ Բանկը ուղարկում է Հաճախորդի ներկայացրած էլեկտրոնային փոստի հասցեին:
17. Բանկն իրավունք ունի իրականացնել Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:
18. Բանկն իրավունք ունի չմատուցել հաճախորդին բանկային ծառայություններ Հաճախորդի նույնականացումը և/կամ Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու հնարավորությունը, ինչպես նաև Հաճախորդի կողմից Պայմանագրով և/կամ Պայմաններով նախատեսված տեղեկությունները/փաստաթղթերը չներկայացվելու և պահանջները չապահովվելու դեպքում:
19. Բանկն իրավասու է սառեցնել, կասեցնել, մերժել և /կամ ընդհատել Հաճախորդի գործարքների կատարումը և/կամ գործարար հարաբերությունը՝<<Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի, և/կամ դրանց կատարման նպատակով Բանկի ընդունած ներքին իրավական ակտերի, Միջազգային պատժամիջոցների/սահմանափակումների/ պահանջները կատարելու հիմքով, ինչի հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար Բանկը չի կրում որևէ պատասխանատվություն:
20. Հաճախորդը (նրա ներկայացուցիչը) նույնականացվում է վերջինիս անձը հաստատող փաստաթուղթը Բանկին ներկայացվելու և նույնացվելու միջոցով: Հաճախորդը համարվում է նույնականացված նաև էլեկտրոնային հարթակներում Հաճախորդի նույնականացման տվյալը (PIN կոդ (ծածկագիր), նշանաբառ, գաղտնաբառ, Հաճախորդին նույնականացնող այլ գաղտնի միջոց) կիրառվելու դեպքերում: Էլեկտրոնային հարթակներում (Բանկի ինտերնետային կայքում, բջջային հեռախոսային հավելվածներում կամ այլ ծրագրային համակարգերում) Հաճախորդի նույնականացման տվյալի կիրառմամբ հարթակ մուտք գործելու, ներբեռնելու և/կամ օգտագործելու միջոցով կատարվող գործարքները, էլեկտրոնային սարքերի վրա Հաճախորդի ստորագրությամբ կատարվող գործարքները, ինչպես նաև կողմերի էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցներով (էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար կամ այլ կապի միջոց) տեղեկության կամ հաղորդագրության (փաստաթղթի) փոխանակմամբ կատարվող գործարքները (պայմանագրերը) համարվում են պատշաճ կնքված Հաճախորդի կողմից և ունեն նույն իրավական նշանակությունը, ինչ կողմերի ձեռագիր ստորագրած փաստաթուղթը:
21. Հաճախորդի ներկայացուցչի լիազորությունները հավաստվում են օրենքով սահմանված կարգով Հաճախորդի

կողմից տրվող լիազորագրով, ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր) հաճախորդի դեպքում՝ պարտադիր նոտարական (վերջինիս հավասարեցվաց անձանց) վավերացումով կամ Բանկում համապատասխան պաշտոնատար անձանց հաստատումով հաճախորդի կողմից տրամադրված լիազորագրով:

22. Հաշվից դրամական միջոցների դուրսգրումը կատարվում է Հաճախորդի հանձնարարականի հիման վրա, Բանկի կողմից վերջինիս նույնականացնելու դեպքում, Հաշվում բավարար դրամական միջոցների/դրական մնացորդի/ ու Սակագներով սահմանված վճարների գանձման հնարավորության սահմաններում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և Պայմաններով նախատեսված դեպքերում և կարգով:
23. Բանկն իրավունք ունի մերժել Հաճախորդի հանձնարարականի կատարումը, եթե՝ Բանկին տրվող հանձնարարականի վավերապայմանները, գաղտնաբառերը սխալ են, թերի են, և/կամ Բանկը հնարավորություն չի ունենում նույնականացնել Հաճախորդին (նրա ներկայացուցչին), կամ Հանձնարարականում նշված գործարքները կատարելու և/կամ Սակագներով սահմանված Բանկի ծառայությունների վճարները գանձելու համար բավարար միջոցները առկա չեն Հաշվին, ինչպես նաև Պայմաններով սահմանված այլ դեպքերում
24. Հաճախորդն անհետկանչելի հանձնարարում է Բանկին՝ Հաճախորդի հաշվի դրամական միջոցներից և/կամ Բանկում պահվող այլ ակտիվներից անակցեպտ կարգով (առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարականի) գանձել Սակագներով սահմանված վճարները, դեբիտորական պարտավորությունները (Բանկի նկատմամբ Հաճախորդի վճարային պարտավորություն, որը կարող է առաջանալ՝ Սակագներով սահմանված Բանկի վճարները չվճարելուց, հաշվի արժույթով չկատարվող գործարքներով արժույթների փոխարկումների արդյունքում առաջացած բացասական տարբերության գումարներից, առանց հավաստագրման կատարվող գործարքներից, Հաշվին համապատասխան դրամական միջոցների բացակայության կամ Հաճախորդին պատկանող ոչ բավարար միջոցների առկայության պայմաններում այդ միջոցները գերանզացող գումարներ Հաշվից օգտագործվելու /ելքագրվելու/ արդյունքում)՝ անկախ դրանց առաջացման պատճառներից (ծրագրային, կապի խափանման և/կամ այլ պատճառներ), ինչպես նաև հաշվանցել Հաճախորդի նկատմամբ ունեցած դրամական պահանջները (վարկեր,վարկային գծեր, երաշխիքներ, դեբիտորական և/կամ այլ դրամական պարտավորություններ), ընդ որում գումարների գանձման հերթականությունը Բանկը կարող է որոշել ինքնուրույն, եթե այլ հերթականություն Բանկի և հաճախորդի գրավոր համաձայնությամբ չի սահմանվել:
25. Հաճախորդի դեբիտորական պարտավորություններն անակցեպտ կարգով (առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարականի) Բանկի կողմից գանձելու համար Հաճախորդի հաշվի դրամական միջոցների անբավարարության դեպքում՝ Բանկի կողմից դեբիտորական պարտքի գումարի վճարման պահանջի մասին Հաճախորդին կատարված ծանուցումից երեք բանկային օրվա ընթացքում Հաճախորդը պարտավոր է վճարել դեբիտորական պարտքը Բանկին: Այդ գումարների վճարումը ուշացնելու յուրաքանչյուր օրվա համար Հաճախորդը պարտավոր է վճարել Բանկին նաև տույժ՝ չվճարված գումարի 0.13 տոկոսի չափով, մինչև դեբիտորական պարտքի փաստացի վճարումը, բայց պարտքից ոչ ավելի:
26. Բանկը պարտավոր է անակցեպտ գանձման մասին տեղեկացնել Հաճախորդին 30 օրացույցային օրում՝ վերջինիս հաղորդակցման եղանակով ուղարկվող Հաշվի քաղվածքով:
27. Հաշվում եղած ցպահանջ դրամական միջոցների համապատասխան չափի դիմաց հաշվարկվում և վճարվում են Հաճախորդին տոկոսներ՝ Սակագներով սահմանված չափով և կարգով:
28. Բանկը պարտավորվում է Բանկային ծառայությունները մատուցել Պայմանագրով, Պայմաններով և Սակագներով սահմանված պայմաններով:
29. Բանկը երաշխավորում է Հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանումը:
30. Բանկի կողմից Հաճախորդի դրամական միջոցների և/կամ Բանկում պահվող այլ ակտիվների նկատմամբ կարող են կիրառվել սահմանափակումներ /արգելվել միջոցների տնօրինումը/ Պայմաններով սահմանված դեպքերում և կարգով:
31. Հաճախորդի նույնականացման տվյալի (գաղտնաբառի) կիրառմամբ կատարված այն գործարքները, որոնք հետագայում կբողոքարկվեն Հաճախորդի կողմից, Բանկը չի կրում որևէ պատասխանատվություն տվյալ գործարքների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար:
32. Էլեկտրոնային հարթակում ծրագրային, կապի և/կամ տեխնիկական խափանումների պատճառով Հաճախորդի հանձնարարականների/գործարքների/նաև վճարային քարտերով/ չկատարման/սխալ կատարման համար Բանկը չի կրում որևէ պատասխանատվություն:
33. Հաճախորդը կարող է Բանկին ներկայացնել իր հարցերը, առաջարկները բողոքները, պահանջները Բանկին գրավոր դիմելով, որին 10 աշխատանքային օրվա ընթացքում տրվում է Բանկի կողմից պատասխան:
34. Բանկին տրամադրված Հաճախորդի տեղեկատվություն ստանալու կապի միջոցով (փոստային հասցեով, էլեկտրոնային փոստի հասցեով, բջջային հեռախոսահամարով՝ կարճ հաղորդագրության ուղարկման համար) Բանկի ուղարկած տեղեկատվությունը համարվում է Հաճախորդին պատշաճ հանձնված՝ Հաճախորդի փոստային հասցեով ուղարկվելուն հաջորդող 7-րդ օրվանից, իսկ էլ. փոստի հասցեով և/կամ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկվելու դեպքում՝ ուղարկմանը հաջորդող օրվանից: Ընդ որում Հաճախորդը պարտավոր է իր կապի միջոցի փոփոխության դեպքում՝ երեք բանկային օրվա ընթացքում տեղեկացնել փոփոխության մասին Բանկին, տեղեկացումից հետո փոփոխված կապի միջոցով Բանկի ուղարկած տեղեկատվությունը համարվում է պատշաճ հանձնված Հաճախորդին սուն կետի առաջին մասով սահմանված նույն ժամկետներում:
35. Հաճախորդն իր բողոք-պահանջները կարող է ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու

պայմաններով: Բանկը հրաժարվել է վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի այն որոշումները, որոնցով գույքային պահանջի չափը չի գերազանցում 100,000(մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը:

36. Պայմանագիրը կնքելով Հաճախորդը համաձայնություն է տալիս Բանկին Հաշվի բացման և/կամ փակման տեղեկությունները տրամադրելու Ընկերությանը:
37. Բանկային ծառայությունների մատուցման հետ կապված կողմերի/Բանկ և հաճախորդ/ վեճերը, այսուհետ ՝ Վեճեր կամ Վեճ, կարող են լուծվել՝ Արբիտրաժի կամ ՀՀ իրավասու մարմնի /ՀՀ դատարաններ, ՀՀ նոտարներ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում/ միջոցով հետևյալ կարգով և պայմաններով.
38. ա/ Կողմերը գալիս են արբիտրաժային համաձայնության այն մասին, որ Վեճերի լուծումը կարող են ներկայացնել Հայաստանի Բանկերի Միության «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ» հիմնարկին, այսուհետ՝ «Հիմնարկ», որում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Հիմնարկի կանոնադրությանը և ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին, այսուհետ՝ կանոնակարգ, համապատասխան: Հիմնարկի կանոնադրությունը և Կանոնակարգը տեղակայված են Հայաստանի Բանկերի Միության պաշտոնական ինտերնետային www.uba.am կայքէջում: Արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Կանոնակարգին համապատասխան: Վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման: Վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Կորյունի փողոց, 19ա շենք, 6-րդ հարկ»: Կողմերը հաստատում են, որ ծանոթացել են Հիմնարկի կողմից վեճի քննության համար նախատեսված Կողմերի իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը:
    բ/ Կողմերը Վեճերի լուծումը կարող են ներկայացնել ՀՀ իրավասու մարմնին և համաձայն են, որ այդ գործերի քննությունը իրականացվի պարզեցված վարույթի կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ու այդ պահանջներին համապատասխան:
    գ/ Յուրաքանչյուր կողմ իրավունք ունի Վեճը ներկայացնել Հիմնարկին կամ ՀՀ իրավասու մարմնին: Եթե Վեճի լուծումը կողմը ներկայացրել է Հիմնարկին և մյուս կողմը մինչև Հիմնարկի կողմից գործի քննությունը սկսելը (մինչև վեճի վերաբերյալ այդ կողմի առաջին դիքորոշումը ներկայացնելու համար Հիմնարկի սահմանած ժամկետի ավարտը) հատուցում է վեճի լուծումը Հիմնարկին ներկայացնող Կողմի կատարած (կատարելիք) պարտադիր ծախսերը (արբիտրաժային վճարներ և այլ) և պահանջում է վեճի լուծումը հանձնել ՀՀ իրավասու մարմնի քննությանը, ապա այդ դեպքում վեճը ենթակա է քննության ՀՀ իրավասու մարմնի կողմից: Եթե վեճի լուծումը կողմը ներկայացրել է ՀՀ իրավասու մարմնին և մյուս կողմը մինչև ՀՀ իրավասու մարմնի կողմից գործի քննությունը սկսելը (մինչև վեճի վերաբերյալ այդ կողմի առաջին դիքորոշումը ներկայացնելու համար ՀՀ օենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտը) հատուցում է վեճի լուծումը ՀՀ իրավասու մարմնին ներկայացնող Կողմի կատարած (կատարելիք) պարտադիր ծախսերը (պետական տուրք և այլ) և պահանջում է վեճի լուծումը հանձնել Հիմնարկի քննությանը, ապա այդ դեպքում վեճը ենթակա է քննության Հիմնարկի կողմից:
39. Հաճախորդը համաձայնվում է, որ Վեճի հետ կապված ցանկացած թղթակցություն, իրավասու մարմնի կատարած ծանուցում, դատական կամ արբիտրաժային ծանուցում, այդ թվում՝ դատավարական կամ արբիտրաժային փաստաթուղթ, հարկադիր ծառայության կողմից ուղարկվող ծանուցում, որոշում, փաստաթուղթ, Հաճախորդին կարող են ուղարկվել Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված Հաճախորդի ծանուցման կապի միջոցով (փոստային հասցեով, էլեկտրոնային փոստի հասցեով, բջջային հեռախոսահամարով՝ կարճ հաղորդագրության ուղարկման համար), որը կհամարվի Հաճախորդին պատշաճ հանձնված համաձայն սույն ամփոփագրի 34-րդ կետի:
40. Պայմանագիրը Կողմերի կնքելու պահից մտնում է ուժի մեջ և գործում է անորոշ ժամկետով:
41. Պայմանագիրը Հաճախորդի կողմից կարող է լուծվել Բանկին ներկայացված միակողմանի դիմումով և Բանկի նկատմամբ պարտավորություններն ամբողջությամբ կատարելու պայմանով: Հաշվի փակման դեպքում՝ Հաշվի դրական մնացորդը Հաճախորդին տրվում է կանխիկ կամ փոխանցվում նրա նշած այլ հաշվին:
42. Պայմանագիրը Բանկի կողմից կարող է լուծվել Հաճախորդին կատարվող միակողմանի ծանուցումով՝ Հաշվին դրամական միջոցների բացակայության և մեկ տարվա ընթացքում Հաշվով գործառնություններ չկատարվելու, Սակագներով սահմանված վճարները, Հաճախորդի այլ պարտավորությունները չկատարվելու, ինչպես նաև Պայմաններով սահմանված այլ դեպքերում:
43. Հաշվից գործարքների (Դրամապանակի համալրումների) կատարման օրական առավելագույնը չափը կազմում է 400,000/չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ և ամսական առավելագույնը չափը կազմում է 2,000,000/երկու միլիոն/ ՀՀ դրամ:
44. Հաշվին մուտքագրվող դրամական միջոցները Բանկի տարածքում Հաճախորդին կանխիկ վճարելու համար Հաճախորդը վճարում է Բանկին կոմիսիոն վճար՝ կանխիկացվող գումարի 1 %-ի չափով